


Ա. ԶԻԴԱՐՅԱՆ.

ՊԱՊԵ

ՊՈԵՄԱ

ՍՈՒԽՈՒՄ — ԱԲԳԻՉ — 1936 թ.



20 NOV 2011

Հ - 57

Ա. ԶԻԴԱՐՅԱՆ.

ՊԱՊԵ

ՊՈԵՄԱ



ՍՈՒԽՈՒՄ

ԱԲԳԻԶ

1936 թ.

А. ДЖИДАРЯН

ДЕД

поэма



59504-66

Պատասխան. Խմբագիր Քալանթարյան Աշոտ տեխ. Խմբագիր Պիշչիկ.

Հանձնված եւ տպագրության 15/III ստորագրած և
տպագրության համար 3/VI 36թ.

ԱԲԳԻԶԻ տպարան պատվեր № գլավլիտ № տիրաժ 2100

ԹԱՊԼ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

1

Չորանի յերկար չիբուխը ձեռքին,
անծանոթ ճամբին աչքերը հառած,
սպանված վորդու զավակը մեջքին
քայլում եր պապը մտախոհ, հոգնած:
Նրա առջեկց քայլում եր չորս այծ
և մի կով կթվան, մեկ ել՝ մի աչառ.
Նրա հետեւից ձիու չափ բարձված,
տնքում եր վորդին քայլով հավասար:
Վորդուց քիչ հեռու բորիկ ու դանդաղ
հեռում եր պապի պառավը չարքաշ,
քայլում շնչասպառ՝ խնոցի ու մաղ,
ջուկ *) ու կաթնատաշտ ծուռ մեջքին դիզած:
Պառավի կողքից, փեշը վեր քաշած
մեծ հարսն եր գնում չորս զավակներով,
մեկին լաչակով իր մեջքին կապած,
փոքրը գրկի մեջ, յերկուսն ել վոտով:
Ամենքից հետեւ, անխոս ու անձայն,
փոքրիկ հարսն եր խեղճ, վոր մի զավակով

*) ջուկ—կաթսա:

ամուսնուն թողած առանց գերեզման,
վշտոտ, անտարբեր անցնում եր ճամբով:

2

Փախած Սուլթանի սրից, կրակից,
թողած դարավոր վաթանը քարոտ,
փախչում եր պապը ծծված դռերից,
վորտեղ ծաղկել եր սարսափ ու կարոտ:
Փնտում եր պապը նոր հարկ ու յերկինք,
վորպեսդի արյուն չկաթի գլխին.
փնտում եր պապը մի նոր հայրենիք,
վոր մարդը սրով չչոքի բկին:
Քնում եր պապը իր վշտին վարժված,
բայց գոհ եր յերկնից, կյանքից չարատանջ,
չեր հուզում նրան անցյալը թողած,
ներել եր արդեն աստծուն ամեն ինչ:
Ամեն աղբյուրից նա ջուր եր խմում
հիշելով թողած ջրերը յերկրի,
ամեն առվակում վոտն եր լվանում
ու չափում աչքով բոյը ծառերի:
Հուզում եր նրան ամեն ինչ ճամբին,
վորդը ուզում եր նա շուառով տեսնել.
նայում եր ագահ հողին, արեին.
ուզում եր մի կուշտ հերկել ու ցանել:

3

Քայլում եր պապը և իր հետևից
տանում եր հուսով, ինչ մնացել եր,
աղոթք չեր հնչում նրա շրթերից
ու չեյին լսվում անեծքի խոսքեր:
Կաթում եր ճակտից քրտինքը հատ-հատ,

4

(՛, ճանր եր բեռը իսկ ճամբան յերկար.)
բայց տաքանում եր սիրտը հուսահատ
յերազված, անահ կյանքի ջերմությամբ:
Գնում եր պապը հույսերով առատ,
դեպի լեռների հեռուն աննշմար.
փախչում եր ծովի ափից մարդաշատ,
վոր թառի անհայտ բարձրունքում անքար:
Ամեն անցնողին գլուխ եր տալիս
ու ժպտում մանկան միամիտ ժպտով,
ուզում եր ասեն. « քեզ բարի գալուստ »
և չշշտանան հյուրից չսպասվող:
Ու քայլում եյին ճամբի յեզերքով
գաղթականի մեծ բեռը մեջքերին,
ամեն ստվերում դադար առնելով,
նայելով ագահ՝ խոպան արտերին:

4

Ինչպես անալիք, անհորձանք մի գետ՝
հոսում եր ճամբան իր ձևած հունով.
ինչպես ցավակից՝ տանում եր իր հետ
հալածված սրտեր անտուն ու դարիբ:
Յեվ մի կարմրավառ ու ջինջ իրիկուն
քռչը կանգ առավ մի մեծ լորու տակ,
իջեցրին բեռը մեջքերից իսկույն՝
գիշերն անցկացնեն այդ տանն անհարկ:
Ու այդ ստվերում սկսվեց իսկույն
չարքաշ գյուղացու կյանքն ամենորյա.
կրակի ծուխը պտտվեց ողում
ուժ ու հույս տալով մարդկանց անվստահ:
Կովկթով մամը կովի մոտ գնաց,
տալով կթվանին թարմ տերև ու խոտ.

5

մեծ հարսը թափան*) կրակին դրած՝
խուսում եր արդեն խավիծը**) յուղոտ:
Իսկ պապը կացնով առանց հանգչելու,
գնաց շրջելու վայրերն անծանոթ,
վոր գուցե մի տեղ գտնի մի առու
և կամ մի աղբյուր գետնից դուրս հոսող:

5

Քունը հալածված չտեսեց յերկար.
առավոտ ծեզին պապը վեր կացավ
և մի արշալույս հրավառ, պայծառ
վողջունեց նրան այդ մեծ ծառի տակ:
Թարմ եր ամեն ինչ՝ յերկինք, լույս ու ոդ
և լուսավորված աշխարհը կանաչ,
միշտ պապղացող լեռները ձյունոտ
փովեցին տեսքով ծերունու առաջ:
Հյուսված ծամի պես փարթամ, գեղեցիկ
կոդորն եր իջնում լեռների գլխից,
և ինչպես զուով փախցրած աղջկ,
դողում եր ողը նրա հառաչից:
Ինչպես փոքրիկ քույր՝ Անթխելն շտապ
ձայնակցում եր իր քրոջն հարազատ.
Իսկ սարերը վողջ, վորպես մայր անբախտ,
հեկեկում եյին խուլ ու հուսահատ:
Պապը հիացած նայում եր չորս դին
ուզում եր ծծել ամեն ինչ մի կուշտ.
հետո խփելով չիբուխը գետնին,
վորոշեց այդտեղ բնակվել ընդմիշտ:

*) թափա—աման

**) խավիծ—կերակրի տեսակ

6

Կնյազը հույսով ընդունեց հյուրին—
խոպան արտերը շատ եյին նրա.
կարիք ուներ նա բանուկ ձեռքերի,
վոր շահագործել նա կարողանա:
Վորքացել եր այդ յերկիրը կանաչ
շատ զավակներից դարերով սնած,
վորոնք հալածված ցարի սվինից
փախան Պոնտոսի ափերն անհայտ:
Յեկ պապը շուտով հարցըեց, իմացավ
վիշտն ու գաղտնիքն այդ նոր աշխարհի.
ու նրա սրտում մի ահ բուն դրավ,
վոր ընդմիշտ նրան հանգիստ չթողնի:
Հիշեց ծերունին յերկիրը թողած
ուր գաղթել եյին տարիներ առաջ,
ու ապրում եյին ծովափը պատած
վրանների տակ«արագա»), «չերքյազ»:
Յեկ միայն հիմա ծերունին դարիք
նրանց վիշտը խոր տեսավ ու զգաց,
բայց նա չհասկացավ խելքով միամիտ,
տարբեր տերերի խաղը մտածված:

7

Ընկան ծառերը լույսով ու հույսով,
մաքրվեց շուտով մի հրապարակ,
ու գործեց պապն իր ընտանիքով
ցցերի վրա մի տուն հասարակ:
Պապի յետեից գաղթական քոչեր
յեկան ու դարձան գրկից ծեր պապին.
լորենու շուրջը կյանք առավ մի գյուղ

7

ու Զախարովկա, վորին կոչեցին:
 Յեվ արմատախիլ ծառերն յեղան,
 մաքրվեց հողը փշից, մացառից.
 լորին եր մենակ, հաղթ ու անսասան,
 մնաց անվնաս անբաժան գյուղից:
 Ու ամեն կեսոր, ամեն իրիկուն
 հավաքվում եյին գյուղացիք այնտեղ
 յերազներ պատմում, քնում, գուշակում,
 դարձերը քամում, լսում կատակներ:
 Լորենին դարձավ Զախարովկայի
 մատաղատեղն ու հանգստավայրը.
 ամբողջ որերով տղերքը գյուղի
 խաղում են այնտեղ «արասիքեսմա» *):

8

Բայց ահա շուտով քաղաքի լեզուն
 յերկարեց գեպի լեռների հեռուն,
 դիմացի սարից թեքվեց դեպի ցած,
 սկսեց իշնել գեպի լորին կանգնած:
 Յեկան մուշաներ մուրճով, սև հացով,
 շինեցին տեղ-տեղ փայտաշեն տներ,
 ամեն ինչ գյուղից գնեցին փողով,
 բերին իրենց հետ տարեր լեզուներ:
 Յեվ յեկավ շուտով մարդը «փեշաթած» **)
 ու լուրեր անցան ահի-սարսափի,
 վոր կտրելու յե լորենին սիրված՝
 քաղաքից յեկած մարդն «հյուքումաթի» ***)

Ու պապը հուղված՝ յուղ ու հավ ձեռքին

*) արասիքեսմա—խաղ

**) փեշաթած—կնքած

***) հյուքումաթ—պետություն

պնաց խնդրելու ահաբեր մարդուն,
 վոր նա խնայի իրեն ու գյուղին,
 չթողնի գյուղը անշուք ու անտուն:
 Յեվ ծառի կողբով խճուղին անցավ.
 հրձվում եր պապը նրա տակ նոտած,
 վոր ձերմակ ոճը խղճաց այս անգամ—
 առանց վնասի գեղ գետը սողաց:

ՄԱՍՆ ՅԵՐԿՐՈՐԴ

9

Չոքան եր պապը: Առավոտ ծեզին
 առնում եր իր հետ կով, այծ ու աչառ
 ու նրանց խառը, կացինը ուսին,
 իջնում եր գետափ, կամ մտնում անտառ:
 Ու ամբողջ որը նա անց եր կացնում
 իր կովերի հետ ինչպես մտերիմ,
 վորոնց սիրում եր իր ծեր որերում
 վոչ պակաս, քան թե իր զավակներին:
 Յեվ ինչպես գյուղի ընակիչը հին,
 վոր ընտրեց այդտեղ վոնց ընակավայր,
 մտահոգված եր բոլորի մասին—
 զգում եր իրան ինչպես գյուղի հայր:
 Յերկար ժամանակ նա գյուղի համար
 աղբյուր եր փնտուում հեռվում մոտիկում
 և յերկու աղբյուր գտավ նա շուտով,
 մեկը ճամբի տակ, մյուսը՝ սարում:
 Յեվ այսոր նորից ճամբորդն յեկվոր
 կարող է տեսնել աղբյուրներն այդ,
 վորոնք կոչվում են պապի անունով.
 հիշում ե պապին այդտեղ ամեն մարդ:

Սիրում եր պապն ընտրած գյուղը նոր,
հրճում եր անզուսպ նրա վերելքով,
հաշվում եր գյուղի կյանքն որեցոր
ու ապա պատմում զսպված հրճանքով:
Ամեն ինչ պապն ուզում եր տեսնել,
չեր հավատում նա ուրիշ աչքերի,
ամեն ինչ ինքը պիտ բռներ, լսեր
թե չե կորցնում եր հանգիստն իր ծեր:
Ու զիտեր գյուղի կյանքն ամենորյա,
թե ինչ ե լինում սարում ու արտում,
ո՞վ ե այդ որը գյուղից բացակա
և կամ ինչ հյուր ե, ո՞ւմ մոտ գիշերում:
Նա գիտեր նույնիսկ, թե վոր տան հարսը
աղջիկ ե բերել, թե դոչաղ տղա,
և ինչե նրան անվանել հայրը—
կամ այդ աշնանը ո՞վ կամուսնանա:
Նա գիտեր նույնպես, թե վոր տան կովը
ծնել ե յերինջ, թե աչառ չուղած.
կամ վո՞ր տանձենին ծաղիկներ չունի,
վո՞ր ծառը պետք ե պատվաստել հիմի:

Պատվում եյին որերը դանդաղ
ճոռացող սայլի անիվների պես,
և ընկնում եյին տարիները պաղ
լորենու դեղնած տերենների պես:
Յեվ կրկնվում եր մի կյանք նեղ, աղոտ
ու թվում եր թե վոչինչ չի գոխվում,
վոչինչ չի ծաղկում նոր ու անծանոթ

այդ հսկա ծառի անփոփոխ շուքում:
Ու չեր նկատում պապը բազմատես,
վոր այդ ճռացող կյանքի ճակատում
գիշվում են կամաց կնճիռներ անտես,
առաջանում են ծալքեր բազմանուն:
Ու բարդանում եր կյանքը բյուրեղյա,
փոխվում եր մարդկանց զիրքը լորու տակ.
չեր գոխվում մենակ լորենին հսկա
և մեկ ել պապը մորուքով ճերմակ:
Ու տեսնում եր այդ ամեն փորձված աչք,
կամ ով դժոն եր իր բախտից գյուղում.
ում վիզն արդեն այրվել եր անչափ
կամ հաստացել եր ծառի ստվերում:

Նախ պապն ինքը թոռանն Ոքսուզ
ուղարկեց քաղաք աշխարհ տեսնելու
և չխնայեց ծխախոտ, ընկույզ,
վոր նա սովորի, դառնա «զուսատու»:
Իսկ յերե վախճանվեց կնյազը ծերուկ,
վոր չկար տանը նրան թաղելու
և վորդիները մորիցը ծածուկ
ժառանգած հողը հանձնեցին ծախու:
Մի շարք գյուղացիք գյուղում շատ շուտով
դարձան հողատեր ցարի անցագրով,
պատեցին հողը յերկաթ թելերով,
վոր մուտք չունենա, վոչ մարդ, վոչ ել կով:
Ու հայտնվեցին գյուղում աննշմար
յեթիմ*) տղաներ անհեր ու անմեր

*) Վորբ—Խեղճ

ու դարձան չոբան ուրիշի դռան
հանգիստը կորցրած, ամառ թե ձմեռ:
Յեվ ծխախոսի հոտը հարբեցնող
բերեց գեպի գյուղ մարդկանց անկշտում,
վորոնք գյուղացուն տալով կանխիկ փող
նրա ապրանքը գնեցին արտում:

13

Ու համում եյին պապի ականջին
որորի վրա լուրեր անսովոր.
մի որ տղերքը նրան պատմեցին
տեղի ունեցած մի գեպք ահավոր:—
վոր այդ առավոտ Ավետն ու Համբոն
քարով ու փայտով ծեծեցին իրար
ու խռովել են տնով ու տեղով
սարի արտերի սինոռի*) համար:
Բայց շուտով գյուղում տեղի ունեցավ
ուրիշ մի նոր գեպք, ավելի ահեղ,—
յեթիմ խեղճ Ծիլոն մի գիշեր կորավ,
վոր ծառա յեր յոթ տարի մի տեղ:
Յերկու որ չանցած դիակը նրա
գտան Ասթխելի քարոտ ափերում.
կացնի հարվածից գտել եր նա մահ
և սեացել եր մարմինը գետում:
Առանց մի դատի գյուղը միաձն ն
ճանաչեց իսկույն մարդուն վոճրագործ,
բայց չեղավ մեկը բերանը բանա,
դուրս գա, բողոքի, մերկացնի տիրոջ:

*) սինոռ—սահման

12

14

Լսում եր պապը. հուզվում եր անզուսպ,
զայրույթն եր հայտնում սրան ու նրան.
իր մոտ եր կանչում մարդկանց սուս ու փում
հաշտեցնում նրանց խրատով այնքան:
Չեր ուզում պապը վոր իրա գյուղում,
մի յերեխայի սիրտն անգամ ցավէ
և չեր ել ուզում Զախարովկայում
անվայել գործեր մարդկանց մեջ լինի:
Ու չեր խնայում ծերը վոչ մի չանք,
վոր տիրե գյուղում հալալ աշխատանք,
թագցնում եր դրսից ամեն մի հանցանք,
վոր գյուղի «սըռը»*) գյուղում մնա փակ:
Յեվ ինչքան շատ են տեղի ունենում
աննամուս գործեր աշկարա, խարդախ,
այնքան ել շատ եր պապն աննկուն
լարում ուժերը, չանելով ախ-վախ:
Ուզում եր պապը իր աշխատանքով
գոհացնել մարդկանց ծակաչք ու անարդ,
և իր գիշերն եր ինչպես ցերեկով,
լրջում եր սարում, գյուղում անընդհատ:

15

Ծախսում եր պապն ուժերը վերջին,
վոր չարը ծածկվի լավ գործի միջե.
առանց նայելու մազին, հասակին,
ինչպես փեսացն՝ առույգ եր, թեթև
Այցի յեր գնում ամեն տուն հաճախ,
շառմ եր մեծին ու փոքրին անձամբ.

*) սըռ—գաղտնիք:

13

խրատ եր տալիս համարձակ, խիզախ,
 վոր վոխ չպահեն իրար նկատմամբ:
 Իսկ ինքը նորից ուժեղը լարած
 գործի յեր կպչում իր գյուղի համար,
 ծառ եր պատվաստում սրանց ու նրանց,
 կամ հյուրասիրում զրույցով յերկար:
 Նա ծառ եր տնկում ճամբի յեզերքին
 կամ խաղ եր ասում մի ծափ շուքից
 և կամ նորոգում վակը^{*)} աղբյուրի,
 կամ ձայն եր տալիս սարերի լանջից.
 Իսկ տոն որերին սրինդը բերնին
 նա նվազում եր լորու տակ նստած,
 և հարս ու աղջիկ, տղամարդ ու կին
 պատվում եյին «սրա պար»^{**)», քրտնած:}

16

Մի ճմուան գիշեր վերադարձավ տուն
 քաղաքում ապրող թոռը ծերունու,
 վեր թռավ տեղից պապը կիսաքուն,
 շտապեց նրան պինդ համբուրելու:
 Յեվ թոռը այդտեղ հայտնեց բոլորին,
 վոր նա թողել ե արհեստն արդեն.
 Կոմիսիոն գարձած Ալաֆերմային՝
 թութունի համար շրջում ե դես-դեն:
 Պապը իմացավ ... զլուխը շարժեց,
 չցոլաց ժպիտ նրա աչքերում,
 թոռի հայացքում պապը նկատեց
 խորթացած ստվեր, մի պաղ սառնություն:

^{*)} վակ—փայտյա ծորակ:

^{**) սրապար—ժողովրդական պար:}

Ու հազար կասկած, ու հարցեր անլուծ
 ծերունու զիմում թառեցին հանկարծ:
 Ի՞նչ ե լինելու իր թոռը եզուց,
 չի ոտարանա տնից նա անդարձ:
 Հրձվում եր մայրը իր վորդու տեսքից,
 և տանը տիրեց ընդհանուր հրձվանք,
 իսկ շատ-շատ մայրեր, հարեան-դրկից,
 ինչպես փեսացու նայում են նրան:

ՄԱՍՆ ՅԵՐՐՈՐԴ

17

Ծերունու թոռը գյուղ վերադարձած,
 ամբողջ տաս տարի մնաց Սուխումում,
 վորից վեց տարին դպրոց նա գնայ,
 մյուս չորս տարում արհեստ եր բանում:
 Շատ ճարպիկ տարավ իր գործը գյուղում.
 ո՞վ կարենար մրցել նրա հետ այդտեղ,
 ո՞վ գիտեր զրել, կամ ոռւսաց լեզուն
 և ո՞վ ծանոթ եր քաղքի կյանքի հետ:
 Շատ շուտով դարձավ նա մեծ հողատեր,
 թութուն եր անում իրա արտերում
 իսկ յերբ նա արդեն մեծ գումար ուներ
 իր թուժարի^{*)} հետ կապերն ե խզում:
 Չորս պլանտացիա ուներ տարբեր տեղ,
 քսան դեսյատին մաքուր սևահող.
 մոտ հիսուն բանվոր, վոնց մի ամբողջ գեղ,
 արան եյին գնում լույսի հետ բացվող:
 Իսկ ինքը նորից հազար ձեերով

^{*)} ամառական

Թութուն եր առնում գյուղերից այնքան,
և ամեն տարի հարյուր փթերով
տանում եր քաղաք ծախելու համար:

18

Դարձավ մեծ հարուստ Ոքսուզը շուտով,
(այդպես ճանաչեց տշխարհը նրան),
անունը նրա սիրով թե ահով
անցնում եր արագ բերանից բերան:
Ու պատմում եյին գյուղացիք գաղտնի,
վոր նա գտել ե մի կարաս վոսկի.
իսկ շատ գյուղացիք և մինչև հիմի
ցույց կտան հյուրին տեղը կարասի:
Պատմում են նույնպես, վոր գտած վոսկին:
թաղել եր այդանու մի արխագ կնյագ,
դրել եր վրան մի քար ահազին,
իսկ քարի վրա քաշել եր մի խազ:
Ու ասում են թե մի շարք գյուղացիք
Ճիշել են որեր հին բերդերի մեջ,
քարեր են զննել մեկիկ առ մեկիկ
սակայն չեն գտել վոսկու վոչ մի հետք:
Յեկ մինչև հիմա լուրեր կան հաստատ,
վոր բերդերի մեջ հին ու քարուքանդ,
թաղել են գաղթող արխազները շատ
տան կահկարասի, վոսկի ու արծաթ:

19

Ու չեր նկատում պապն անդադար,
թե ինչպես ծառը կորցրել ե վաղուց
հմայքն առաջվա իր գյուղի համար
և դադարել ե կենարոն լինելուց:


16

Ու չեր նկատում վոր ծառի կողքին
բուսել ե ուղից կենդանի մի ծառ,
վորի պաղ, անշուք ստվերի տակին
պտույտ ե գալիս գյուղում ամեն բան:
Զեր կարում պապը հայացքով իր խոր
տեսնել, հասկանալ կենարոնն այդ նոր.
իգուր եր լարում ուժերը բոլոր,
վոր աշխուժացնի կյանքը նորից նոր:
Ել չեր հավաքվում գյուղը լորու տակ,
տարբեր հոգսերը ցրել են մարդկանց.
չկար ընդհանուր տոն, մատաղ, պատկ,
չկար ընդհանուր ծիծաղ, քեֆ ու լաց:
իգուր եր պապը ծառի տակ նստած
սրինգի ձայնով անում լաց ու կոծ,
չեր հուզում ել նա հոգսի տեր մարդկանց
բացի փոքրերից, հյուրերից անգործ:

20

Յեկ ահա մի որ հայանեցին պապին,
յերբ նվազում եր սարում ինքն իրեն,
վոր թոռն իրա կտրում ե լորին,
վոր տեղը շինի մի տուն քարաշեն:
Հոսեց մարմնովը մի սառն արյուն
թուլացան պապի ծնկներն անուժ,
ջարդելով ձեռքի սրինգն իսկույն
շարժվեց անտառով աշքերում մշուշ:
Վազում եր պապն ինչպես վիրապոր,
թուչում եր կարծես հողը վոտի տակ
ու չեր ել զգում վոչ ծառ, վոչ ել ձոր
իջել եր գլախն յերկինքը տափակ:
թուչում եր պապն ինչպես մի սլաք,

17



ՀԱՅՈՒՆ-ԱՐՄ. ԸՆԹ.

ուղեղն ու միսը խառնված իրար
յեփ եյին գալիս արյան մեջ յեռող
դարձել եր պիրտը շիկացած ու քար:
Սառը քրտինքը փոխվեց գոլորշու,
այրվում եր պապը զայրույթով լցված,
չեր կարում գտնել խոսքեր ու լեզու,
փոր արտահայտի ցասումը ժայթքած:

21

Կիրակի որ եր: Լուռ շրջապատած
լորենին հսկա՝ սառել եր զյուղը.
Վորպես վկաներ գյուղացիք կանգնած
լուռ սպասում են ծանր փոճիրին:
Կանայք ձեռքերը ծնոտին դրած,
խմբով հավաքված բլուրի վրա,
նայում են իրար և ծառին կանգնած,
ու ճմլվում են սրտերն ակամա:
Իսկ տղամարդիկ այստեղ ու այնտեղ,
հավաքված խմբով զրույց չեն անում.
յերբեմն մեկը կատակով տգեղ
իր լսողների զայրույթն ե շարժում:
Իսկ տղաներն ել ճիշտվ, գոռոցով
վագում են արագ իրար յետեից,
խաղում են անկապ խաղեր, վասգում,
ծառը բարձրանում ու իջնում նորից:
Լորենու կողքին ինքնագոհ տեսքով,
կանգնել ե հպարտ թոռը ծերունու
նայում ե շուրջը մի բութ հայացքով,
ծաղրում ե մարդկանց անզոր ու հլու:

18

22

Յերևաց հանկարծ անստառից յելնող
ալեհեր պապը վազքով շնչահատ
ու զյուղն ամբողջ ինչպես մի դիտող,
նայել սկսեց պապին անընդհատ:
Յեկավ ծերունին վլուխը բարձր,
վնասում եր ողում կարծես ուզածին,
կարծես շնչում եր մահվան թույն թանձր—
դիտում եր մարդկանց ու կանգնած ծառին:
թոռին նկատեց ծառի բնի մոտ—
գնաց ու կանգնեց ուղիղ նրա դեմ,
նայեց աչքերին հայացքով արնոտ.
գյուղը նայում եր լուռ ու անհամբեր:
,, ի՞նչ պատահեց քեզ, ի՞նչ կուզես ինձնից,,
լեղավ ծերունու խոսքն առաջին,—
,, հերիք չեր յեկար շատ մարդկանց հախից,
հիմա յել յելար ու կպար զյուղին,,
Ծաղրական շեշտով Ոքսուզը կոպիտ
ասաց իր պապին. ,, գնա քո գործին,
կովերիդ նայիր, ծերունի անմիտ
և մի խառնվի թոռիդ գործերին,,:

23

“Լսիր ինձ, Ոքսուզ, աղաչում եմ քեզ,
լսիր մի անգամ քո յեսիր պապին.
հորդ մորթեցին կացնով յեզան պես,
իջնում եր կացին նաև քո գլխին.,,
“Հորդ թողինք մենք Միմերա սարին,
քեզ ազատելով կացնի հարվածից”

19

բերի ու հասցըի այս իմ ծուռ մեջքին
 այս լորենու տակ, անից ու մահից:
 „Մարաված տեղտ աղբյուր եմ բերել
 ու ծառ եմ տնկել քո հոգնած վայրում.
 քո ամեն խոսքին յես „հա“ եմ ասել,
 չեմ սիրել քեզ չափ մեկին աշխարհում:
 „Լոիր մի անգամ աղաշանքն իմ, “
 և պապն ընկավ վոտքերը թոռի.
 „ տուն ես շինելու, շինիր բլուրին,“
 ցույց տվեց պապը բլուրը մոտի:
 Ոքսուզը հրեց ձեռքերը նրա
 ու գոռաց բարձր ծերունու թոռը
 „ինչ ես շատ հաջում, ցնդած, տուն գնամ“,
 և հրամայեց, կտրեցէք ծառը“.

24

Պապը վեր թռափ, գրկեց լորենին,
 համբուրեց նրան ու նայեց դեպ հետ.
 „Մեջքիս խփեցէք կացինն առաջին...“
 Ու ընկավ գետին արցունքների հետ:
 Մի խումբ գյուղացիք մոտեցան նրան
 չասելով մի խոսք բարձրացրին վոտի,
 իսկ կողքից լավեց, հեռացը դրան,,
 և չբողոքեց վոչ մի գյուղացի:
 Ծերունին կանգնեց՝ հայացքը հպարտ
 սևեռեց մի պահ իր շուրջը նորից,
 ու իջնում եյին կաթիլները տաք
 չորացած գեմքին, այրվող աչքերից:
 „ինչ եք շվարել ու ձեն չեք հանում,
 խուզում ե գյուղը որը ցերեկով...“

20

ասաց ծերունին թմրած ամբոխին
 ու ապա գոռաց իր ամբողջ ձայնով.
 „Վորբերի լիզած հացը խլեցիր,
 այնքան մայրերի անեծքը առիր,
 անմուրազ մնաս, անիծված յեղիր,
 ինչպես վոր դու ինձ անմուրազ թողիր:“

ՄԱՍՆ ԶՈՐՌՈՐԴ

25

Պապն այլայլված թողեց հեռացավ,
 զույգ կացինները զարկով միալար
 ճանապարհ դրին ծերունուն զառամ,
 վրը փախչում եր ինչպես խելագար:
 Եատ կանայք լացով ճամբեցին պապին,
 իսկ շատ գյուղացիք թողին հեռացան.
 սրտերը սեղմած վոմանք մնացին,
 վոր առնեն ծառից կարոտն այնքան:
 Յեկ ընկավ ծառը... խշոցը նրա
 տարածվեց, անցավ գյուղերն հարեան
 հազար բերաններ ասեցին մի պահ.
 „ Մեռավ, ել չկա ին Զախարովկան:“
 Ու գյուղն ապլեց իր վիշտն ընդհանուր,
 մարդկանց սրտերում զարթնում եր մի խոր,
 անորոշ մեծ վիշտ, ըողոք ու զայրույթ.
 դարձել եր գյուղը ինչպես վիրավոր:
 Ապտակն աշկարա գյուղը նոր զգաց,
 յերբ արդեն չկար հակա լորենին.
 գյուղը նոր տեսավ իրա դեմ կանգնած
 իր ծոցում սնված ներքին թշնամուն:

21

Գնաց ծերունին, մոտեցավ իր տան,
ուզեց ներս մտնել գլուխը կախած,
բայց վերադարձավ շեմքիցը դռան—
հարազատ տունը իրեն խորթ թվաց:
Աչքերը մթնած գնաց ծերունին
աղբյուրների մոտ իր ձեռքով շինած,
բայց աղբույրներն անհամ թվացին,
չեր հանգչում սրտի կրակն անլաց:
Ու ամբողջ որը, ինչպես ցավագար,
շըջում եր ծանոթ վայրերում արագ,
չեր կարում մնալ հանգիստ մի վարկյան
հա պտտվում եր լուռ, աննպատակ:
Ուռել եր սիրտը դեմ առել բկին
ուզում եր դուրս գալ բերանիցը նեղ
նայում եր դժգոհ հողին, արևին
աշխարհն ամբողջ թվում եր անտեր:
Իսկ յերեկոյան վորոշմամբ հաստատ,
վերցրեց իր շունը և մի այծ կթվան
շինեց գյուղից դուրս մի փայտե վրան
գյուղից ու տնից ընդմիշտ հեռացավ:

Այդ որից հետո չտեսավ վոչվոք
պապին մարդկանց մեջ կամ գյուղում իրա,
վոչ վոք չլսեց իրատ ու բողոք,
վոչ վոք չլսեց բարել նրա:
Դադարեց ընդմիշտ ձայնը սրնգի
մնացին միայն լոկ քաղցր հուշեր,
սակայն շըջում են գյուղումն ելի

պապի կյանքիցը նորանոր լուրեր՝
Շատերն ասում են, թե լուռ ծերունին
շինել ե նորից սրինգ իր համար
և նվազում ե նա լուսաբացին,
յերբ յերեսում ե լուսաստղը պայծառ:
Ու պատմում են թե յերգին կարուտած
հսկել են վոմանք հասած արտի հետ,
պապի վրանը մինչև լուսաբաց,
սակայն չեն լսել վոչ նվագ, վոչ յերգ:
Ասում են նույնպես, վոր կես գիշերին
աքաղաղների կանչի հետ մեկտեղ,
շըջում ե պապը Անթխելի ափին
և արտասվում ե խուլ ժայռերի հետ:

Յել այսպես անվերջ հեքյաթի ձևով
պատմում են մարդիկ հազար ու մի դեպք
ու պապի շուրջը հյուսում են սիրով,
ժողովրդական բանավոր մի վեպ:
Գյուղը սիրում եր պապին վշտահար,
վոր մարմնացնում եր նրա վիշտը խոր,
հաճախ են մարդիկ այցելում նրան
տանելով մածուն, հաց, յուղ ու խնձոր:
Բայց ինքը պապն անտարբեր եր միշտ,
դեպի իր գյուղը մարդկանցով անպետք
նա ձեռք եր քաշել գյուղիցն ընդմիշտ
կարծես չեր յեղել նրա մեջ յերբեք:
Նա խուսափում եր խոսքից ու մարդուց
վոչ հարց եր տալիս, վոչ հարց եր լուս,
նա հուզվում եր, յերբ մեկը խղճալուց
հույս եր ներշնչում կամ խրախուսում:

Յեվ նա դժգոհ եր թե ինչու յերկնից
չի թափվում ներքեւ հեղեղ կամ կրակ,
աշխարհը նեխված, չի մաքրում հիմքից,
վորտեղ իշխում ե սուտն անհատակ:

29

Բայց ահա շուտով այդ գյուղը հասավ
մեծ պատերազմի լուրն ահաբեր.
Հոսեց գեղի գյուղ հազար ու մի ցավ,
իսկ մարդկանց սիրտը՝ մահացու հոգսեր.
Լորու տեղ կանգնեց հպարտ ու հանգիստ
յերկու հարկանի սպիտակ ամրոց.
Ներքեց խանութի, սրճարան, պահեստ,
վերը՝ տուն ջրեղ և մեծ հյուրանոց:
Իսկ յերբ Ոքսուզն ուզեց փոխադրել
իր ընտանիքը նոր շենք հնից՝
բացի իր մորից, կնոջից ջահել
վոչ-վոք չգնաց նրա հետեւից:
Դյուղը խճճված ծանր հոգսերում,
մահվան յերկյուղից մարդիկ հալածված,
ահով նայում են արևին, քամուն,
տեսնում են այստեղ մահ, ցնորք ու քաղց:
Պապին վշտահար գյուղում մոռացան—
ո, ծանր եր որն ամեն որ բացվող,
որերը գալիս արձճի նման
չոքում են գյուղի մեջքին կոտրվող:

30

Մեծ պատերազմի մի տարին չանցած
հարեան գյուղում մի տեսելք յեղավ...
Մի աղջիկ հասուն մի որվա մեռած,

24

մյուս աշխարհից հետ վերադարձակ:
Պատմում են մարդիկ վողջ սարսափահար,
վոր այդ նույն գիշեր յերեք ընկղենի
կոացան գետին փաթաթված իրար
և համբուրեցին աղբյուրը պապի:
Ել մարդ չմնաց ամբողջ շրջանում,
վոր չայցելեր տեսիլք աղջկան,
բացի ծերունուց անտարբեր, անքուն
և մեկ ել թոռից մեծ ինքնահավան:
Ասում են տեսիլք աղջիկը մի որ,
յերբ տեսավ չեկավ ծերունին այցի,
լուր տվեց, վոր գա ու ասի բոլոր
պապին ուղարկած խոսքերը փրկչի:
Բայց պապը կտրուկ պատասխան՝ տվեց
„յես խաղալիք չեմ մարդկանց ու աստծու,
յեթե տերն ուզում ե մի բան ասել ինձ,
թող վոր ինքը գա առանց վախելու”:

31

Յեվ հասավ գյուղը հեռու հյուսիսից
այն մեծ որերի շունչը վոգելից,
վառեց սրտերում հալածված մահից՝
կյանքի նոր ջահեր, դեռ զրկված լույսից:
Յեվ գյուղը զինված մտքով ու զենքով,
մարտական կոչին ինչպես պատասխան,
դուրս յեկավ մի որ անթիվ գյուղերով,
վոր զենքով խլեն քաղաքը դուշման:
հետո գյուղացիք գիշեր ու ցերեկ
խրամատներում կողորի ափին,
պաշտպանում են կուռ, զենքով ու անզեն,
հողն ու յերկիրը թշնամուց գրսի:


25

Իսկ յերբ վոր գյուղը կռվեց նահանջեց
 (անհավասար եր շատ ույժը կողմերի)
 գյուղը վոչ միայն չզինաթափվեց,
 այլ նաև ուներ յերկու գնդացիր:
 Ու գյուղը տոնեց իր տոնը շուտով.
 բարձրացրին ընդմիշտ քսանմեկ թվին
 կարմիր դրոշակ մուրճ ու մանգաղով
 Ոքսուզի մեծ տան բարձր կատարին:

32

Ժողով եր գյուղում: Ամբողջ գյուղն այնտեղ.
 ծերուկ ու ջահել, աղջիկ յերեխա,
 խոսում են հուզված, զայրույթով ահեղ,
 իսկ վոմանք լուռ են գեսքերումը ահ:
 Վրդովված գյուղն անզուսպ, համարձակ
 վճռեց միաձայն հենց այդ նույն գիշեր
 դպրոցին հանձնել շենքն սպիտակ,
 նրա տիրոջը գյուղից հեռացնել:
 Ահա այդ ժամին, յերբ գյուղն ընդմիշտ
 հանում եր իրա վճիռն ընդհանուր,
 քամին բերում եր, ինչպես անցած վիշտ,
 պապի շան յերկար վոռնոցը տխուր:
 Անտաշ դադաղում մյուս որը ծեղին,
 հինգ-վեց գյուղացի կատակով, ժպտով
 տամում են պապին, վոր հանձնեն հողին.
 լոկ շունն և տխուր իր ծեր աչքերով:
 Իսկ յերբ պապի դին թեքվեց բլուրից,
 գյուղից դուրս յեկավ և թոռն անզութ
 մարդիկ նայում են նրա հետեխ
 սրտերում ծիծաղ, դեմքերում զայրույթ:

1935 թ. Սուխում:



ՀՀ Ազգային գրադարան



NL0362339

50 к.

51926

471
872

БДР 705



А. Джидарян.

„Дед“

Поэма.

г. Сухум, типо-лит. Абгиза. Зак. 1565. Тир. 2100. Абгл. 2021.